ԳԼՈՒԽ ՃՀԲ.

Ամենայն իշխանք եթէ ծայրագոյն, եթէ ժամնաւոր, եթէ 'ի կարգէ զինուորութեան, և կամ կառավարութեան ամենայն կերպիւ բարիս ազատապէս գործել կարէ, այլ չար ոչ մի, և եթէ բարեգործութիւնք ուրեմն պատուեցեալ լինի 'ի մէնջ, և հատուցումն բարեաց գործոց իւրեանց ըստ հաւատոց մերոց ստանասցեն 'ի հանդերձելումն, և 'ի գործս անօրէնութեան գործողն դատաստան ընդունեսցեն ըստ Օրէնքի։

ԳԼՈՒԽ ՃՀԳ

Արհեստաւոր մինչ ոչ գոցի թուղթ վկայական ձեռնադրեալ 'ի վարպետէ իւրմէ, որում խոստովանէ զի սա կատարեալ է մի յիշխեսցի ըստ անձին ընթանալ 'ի գործ արհեստին իւրոյ։

ԳԼՈՒԽ ՃՀԴ.

Ամենայն ոք որ ստանայցէ սպասաւոր և կամ աղախին վարձու պարտ է ձեռնադրեալ լինիցի դաշնադրութիւն պաշտօնին և վարձուն և ժամանակ սպասաւորութեան։

ԳԼՈՒԽ ՃՀԵ.

Ո՛չ ոք տէր և կամ տիկին վասն մեղաց սպասաւորի և աղախնոյ իւրոյ մի կարողասցի